



### Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ա Տ Ո Ւ Ն

Վայրագ, կատաղի կինճի հսկայ զուխ մը կը « զարգարէ » գեղեցիկ հատորի մը ճակատը, զոր հանճարեղ կերպով երկասիրած է, այլարանական ոճով, Ճարտ. Պ. Լ. կիրեղեան, նախկին Աշ. Մուրատ — Ռափայէլ վարժարանին, և Մխիթ. Միար. Ընդհ. Աբրայ և Արքեպ. Իգ. կիրեղեանի եղբոր որդին: Պատասխանատուն Գերմաներան է (կինճը):

Առաջին հայեացքով մարդ պիտի կարծէ թէ կենդանարանական պարտիզի մէջ պտոյտի կ'երթայ, ցանցապատներու ետեւէն դիտելու անասուններու կենցաղը: Բայց ոչ իրաւ կը տեսնես կենդանիներու ժողով մը: Բայց չես խորշիւր անոնց ընկերութենէն, հետաքրքրութիւնդ կը շարժէ ունկնդրելու, անոնց բնական և քաղաքական խօսակցութեան, հարց ու պատասխանին. կը հաւանակ կը գովես թէ ինչպէս անասուններն իրարը, արգարը կ'ըմբռնեն և անկեղծօրէն իրենց վճիռները կու տան, առանց շահասիրական նկատումներու և վերապահումներու իրենց համար, ջրարբի և խոտաւէտ արօտատեղիները. այլ կ'ուզեն որ զայլերն և զառններն ի միասին ճարակին և առիճն եզան պէս յարզ ուտէ կշտանայ:

Պարտն Լևոն, Որփէոսի դարուն կ'ուզէ առաջնորդել ի. դարու մարդկութիւնն:

Ամեն անասուն մեծ կամ փոքր, հզօր կամ տկար, մէն մի մարդկային ցեղի ներ-

կայացուցիչն է՝ Առիճն՝ է արդարու թիւնը, իսկ Զորին՝ չարութիւնը: Այս Յուցահանդիսի մէջ, իւր նոր օրինակ կազմութեամբ, քաղաքական, տնտեսական և բարոյական և այլն հարցեր, արագ արագ կը լուծուին աւելի անկեղծ և ընկերանշար լեզուով և տրամաբանութեամբ, քան դիպլոմատիական սեղաններու վրայ զլուծաներն: Ամեն անասուն, զոր բնութիւնն ստեղծեց է, իւր ցեղի բարոյական և քաղաքական հասկացողութեան և զարգացման մասին կը խօսի, որով օգտակար եղած է իւր երկրին և կենդանական թագաւորութեան, և կը խոտանայ լաւագոյն կերպով գործել յապագային, աշխարհի երկար և յարատև խաղաղութեան համար:

Միայն մարդու ձեռքով ստեղծուած Զորին է, թուրքն, որ իսկզբանէ նոյն ձեռք և նոյն վիճակի մէջ մնացեց է ծնած օրէն. բնաւ բնութիւնը չէ՛ փոխած դարերու ընթացքի մէջ և մնացեց է նոյն թանձրամիտ, առիճի և վայրենին: Որ դախտի մէջ մտեր է, ապականեց է մարգագետիններ և ծաղկունք, և վերածեց զայն անբիւր անապատներու:

Արդարապատ ատենին առեղէ, արժան և իրաւ կը գտտապարտութի ըջուելու այն անապատները, ուսկից որ ելեր էր, և ուր իւր աւերիչ և քանդիչ սմբակներով չի պիտի կարենայ փնասել շարժուն աւազներն: Այո՛, միայն այն ատեն յառաջաւոր Ասիան, Միջագետք, իւր ամեն պարագաներով, զոնալով խաղաղութիւն և շինութիւն, պիտի կարենան վերաստեղծել իրենց նախկին ծաղկեալ վիճակն, և միջնորդ դառնալ Ասիոյ և Եւրոպայի հարստութեան: Իսկ Ազգերու ընկերակցութեան մէջ՝ աշխարհի աղբար և մշտատև խաղաղութեան:

Գիրքը գրուած է գաղղերէն լեզուով: Մեր անկեղծ ուրախակցութիւնքը մեծարգօյ Հեղինակին, և կը՛ մաղթենք իրեն հետ որ անտառէն դուրսն ալ լսելի լիւնէր իրական ճշմարտութիւնը և երկնային քաղցրածայնութիւնն:

« Եւ յերկիր խաղաղութիւն  
Եւ ի մարդիկ Հաճութիւն »

ԽՄՐ. ԲՅՄ.